

մեռաւ 87 տ. հասակում։ Երկար տարիքը սովորական երեսով է եղել այդ նշանաւոր ընտանիքի մէջ։ 1839 թ.-ին ամուսնանալով Հավարդէն գղեակի տիրոջ անդրանիկ գուստը Կատարինէի հետ նա այնուհետև հաստառուն բնակիչ մնաց այդ գղեակի, որ և հաշակուեցաւ նորա անունով և որ իւր շրջակայքի հետ մէկտեղ ամփոփում է նորա մեծարդիւն կեանիք և բարեգործութեան բազմաթիւ յիշատակարանները Արդէն 1832 թ. ին երբ նա, գեռ ևս 23 տարեկան՝ այդ խորհրդարանի անդամ՝ ընտրուեցաւ մեծ յոյսեր ունեին նորա ապագայի մասին և կարծում էին թէ ժամանակով ուրիմների (պահպանողական) կուսակցութեան սիւներից մէկը կը լինի. Սակայն վերջին կարծիքը շարգարացաւ. Գլագուտոն սկսեց շուտով նկատել, որ իւր ազատ և լայն գաղափարները չեն համակերպում մեծ մասմբ պահպանողականների նեղ շահերին և 1846 թ. ին նա իրեն այնչափ հեռու էր զգում այդ կուսակցութիւնից, որ լաւ համարեց թողնել առ ժամանակ քաղաքական ասպարեզը։ Երբ նա կրկին հանդէս եկաւ 1859 թ. ին, արդէն բացարձակ կերպով վիզերի (ազատամիտների) կողմն էր անցել, իսկ 1867 թ.-ից ի վեր, երբ մեծ հոչակ ստացաւ իրլանդական դատի պաշտպանութեամբ՝ ճանաչուում էր իրեն այդ կուսակցութեան անդիմելի պարագում։ Երկու տարի յետոյ նորան յանձնուեցաւ ազատամիտ կուսակցութեան ներկայացուցիչներից նախարարութիւն կազմել։ և այնուհետև նա մի քանի անգամ կառավարութեան գլուխ է եղել՝ վերջին անգամ՝ 1892 թ. ին, երբ ստիպուած էր քիչ ժամանակ յետոյ ընդ միշտ հեռանալ ասպարիզից, ծերութեան պատճառաւ։ Նորա քաղաքական գործունեութեան ամենափայլուն է չըրը կազմում են Իրլանդիայի անկախութեան և Իռլանդիայի ազատութեան համար վարած պայքարները։ իսկ յաւիտենական յիշատակաց արժանի մի րոպէն նորա կեանիք այն է, որ 1896 թ. ի սեպտ. 24 ին, 87 տարեկան հասակում, իւր հանգստութեան վայրը թողած հաետորական ամբիոնի վերայ բարձրացաւ և իւր հանգչող ձայնի վերջին մը նացորգով բողոքելու տառապեալ հայ ժողովրդի խողովիշների գէմ։ — Գլագուտն վախճանուեցաւ մայիսի 7 ին, 89 տարեկան հասակում և թաղուեցաւ Աւստմինստորի մայր տաճարում՝ ազգային հաշուով։



ՄԱՏԵՆԱԼԽՈՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՒ

Սահմակ քահ. Սահմակնաց. Տփիսիս, 1898:— Արժ. Սահմակ քահանան, որի կրօնի ուսուցման զանազան ձիւղերին վերաբերեալ զասպագիքը միցակից չունին առ այժմ և իրենց արժանիքին վայել առաջնակարգ տեղ են բռնում մեր գրպոցական գրականութեան մէջ՝ նպատակ է ունեցել անշուշտ այս գրում ամփոփել իւր մանկավարժական և կրօնական հայեացքները, իւր երկարամեայ ուսուցչական փորձառութեան արժասիքը. ուստի թողներուի մեզ ևս համեմատաբար լայն շրջանակով, ընդհանուր տեսակեաների ներքոյ քննութեան առնել նորա երկասիրութիւնը և տեսնել, թէ որչափ ուղիղ են նորա հայեցողութեան հիմունքները։

Հայր Սահմակի մի ուրիշ պատաճքի մասին խօսելիս մենք ցանկալի ենք համարել, որ նա «աւելի նոր և ոչ աշխարհական», այլ հմուտ աստուածաբան մանկավարժների գրուածքներին հետեւել».* բայց ցաւելով տեսնում ենք, որ այդ ցանկութիւնն ուշագրութեան չի արժանացել։ Օտար հեղինակութիւններ անկասկած նա աչքի առաջ ունեցել է, ինչպէս իւր միւս այնպէս և մասսա անդ այս նոր աշխատութեան մէջ, որ եթէ չի յիշում, մենք համազուած ենք՝ ոչ թէ ուրիշի բարիքը սեփականելու տենչով է, այլ ուրիշ կողմանակի խորհրդածութիւններ են պատճառ. թէ, պէտ մենք այդ ևս իրաւացի շենք գտնում և աւելի բարւոք կհամարելիք յիշատակուած տեսնել բոլոր այն զբքերը, որոնցից նա օգուտ է քաղել գորանով քննադատութեան և գնահատութեան գործն ևս շատ աւելի գիւրին կիրնէր։ Յամենայն գէպս այն հեղինակութիւնները, որոնց հայր Սահմակ հետեւմ է, մեր ժամանակի ոչ աստուածաբանական և ոչ մանկավարժական զիտութեան ներկայացուցիչներ են, այլ 50-ական թուականների սերունդ, հետեղ չեզել—չերար-

*.) Տես. Արարամ. 1896. փետրուար. հր. 80.

տեան այն երջանիկ աշխարհահայեցողութեան, որ պատմութիւնը որոշ փիլիսոփայուկոն տեսութիւնների համաձայն կանոնաւորապէս յառաջ ընթացող և մարդկային բանականութեան կանոնաւոր զարգացու մը պատկերացնող դէպքերի մի շարայարութիւն էր համարում, իսկ քրիստոնէութիւնը իրեւ այդ զարգացման հասուն պատու դներից մէկը՝ զարգացած մաքին ըստ անհնայնի համապատասխան կրօն, որով և յարմարաւ որ միջոց բանական մարդու բարձրագոյն բնական պահանջներին համաձայն բարոյականութիւն զարգացներու։ Այս աշխարհահայեցողութեան վտանգուոր կողմն այն է, որ շլացուցիչ զիտնական կերպարանքի ներքոյ իրօք հակագիտանական մի ուղղութեան հետեւելով, պատմական երեսութներին կամայական բացարութիւններ է տալիս և յատկապէս քրիստոնէութեան նկատմամբ՝ կրօնը բարոյականութեան սպասաւոր զարձնելով և այն մոլորութիւնը տարածելով, թէ յայտնութեան կրօնը նոյն է, ինչ որ մարդ իւր բնական գոտողութեամբ ըմբռնում է՝ աւետարանի իսկական ուղիղ ըմբռնման արգելք է լինում և զպրոցի մէջ փոխանակ ջերմեռանդ կրօնական զգացումն սուուցանելու, զարգացնում է անշահ և խակ գատողութիւններ՝ կրօնական բարոյական փամ զարգարների և աշակերափ մատծողութեան սահմանից բարձր խնդիրների մասին։ Աչա այսպիսի աշխարհահայեցողութեան արզիւնքն է նաև, որ Հայր Սահակ մեր առաջ գնում է 336 էջ պարունակող «Քրիստոնէական կրօնի» մի գառապիքը, ուր վերջին նախագտասութեան մէջ Հարցրած է, թէ ո՞վ է Քրիստոս, Մարգոյ Որդին, և այդ Հարցի պատասխանը թողած է հատորի մէջ տալու։

Մենք «Քրիստոնէական կրօնի» ուսուցումն առանց Քրիստոսի հասկանալ չենք կարող հարկաւ Հայր Սահակ ևս մեզ պէս է, ընդունում, և առաջնորդուում է, միայն այն գաղափարով, թէ Քրիստոս կրօնի մէջ կամ շատ զիտելիքներ, որոնք առանց աւետարանի իսկ, լոկ բանական ուղիղ գատողութեամբ կամ չին կատարանի ցուցու մներով ըմբռնելի են մեզ՝ նախ պէտք է այդ ամենը սովորել տպարուն աւետարանին՝ Քրիստոսի անձնաւորու-

թեան կամ Քրիստոսի վարդապետութեան անցնել։ Սակայն այդ գաղափարը սխալ է, և որա անիրազործելի լինելը երկում է մեր առաջ եղած զրբի իւրաքանչիւր էջից։ Հաւատագով հանդիրձ թէ Արք Հեղինակը Բ. հատորի մէջ յանձին Քրիստոսի տեղի ունեցած յայտնութիւնը, իւր խորհուրդներով և իւր փրկարգործական նշանակութեամբ, ճշգիւղիւուք է յառաջ բերէ և պարզաբանէ, մենք այսում մենայնիւ անտեղի և անկարելի ենք համարում քրիստոսի կրօնի որ է և գաղափարը խորհրդագործութեան առնել՝ առանց Քրիստոսին աչքի տռաջ ունենալու, առանց նախապէս Նորա մասին մի որոշ զարգափար կազմելու կամ ապօւ։ Ներածութեամբ օտար կրօնների թէկուզ ա. Դրբի և կրօնի հետ առընչութիւն ունեցող այլ կրօնական առարկաների և խնդիրների մասին ծանօթութիւններ հաղորդել իրաւոնք է անշուշտ, գուցէ և պարտականութիւն։ բայց իրբ Քրիստոնէութեան ենք զալիս, նորա հիմնական գաղափարներին, ուրեմն բուն նիւթի՝ մէջ ենք մտնում, հիմնական համարում ենք այնտեղ Աստուծոյ արքայութեան գաղափարը և ըստ այնմ բաժնում ու ձեւակերպում մեր նիւթը՝ պէտք է չմոռանանք, որ այդ գաղափարն իսկական մոլով Քրիստոսից առաջ չի եղել (Հ. Սահակ ընդունում է այդ), Նա է քարոզել և բացարել ուրեմն և մենք ամէն մի կետը բացարելիս պէտք է հարցնենք նախ, թէ Քրիստոս ինքն ինչ է արել, և մեր եզրակացութիւնները Նորա քարոզութեան վերայ հիմնենք։ Հ. Սահակ այդպիս չի վարուում։ Աւետարանի ամենամեծ զարգարներն իսկ նա շնարաւոր է համարում մեր մաքի թերագրութիւններով կամ չին կատարանի վկայութիւններով բացարելը և մենք կարգում ենք ամբողջ զրբքը առանց կարողանալու որչել։ թէ բուն քրիստոնէականն ինչ է, չին կտակի յայտնութիւնը ինչ և մեր մաքի ըմբռնածն ինչ։

Ով պատմական զարգացման վրայ ուշադրութիւն չի գարձնում, այլ դաւանարանական տեսակետով է նայում խնդիրն, նա իրաւոնք ունի հարկաւ մեր գաւանութեան գլխաւոր կետերը մի առ մի յառաջ

բերել և չին ու Նոր Կտակարանի վկայութիւններով անխափի հաստատել բայց պէտք է ցոյց շտայ այն ժամանակի իրը թէ դիմանական ճանապարհով է յառաջ գնում և զարգացման աստիճանները մի առ մի անցնելով՝ վիրջը միայն Քրիստոնին համառում մանաւանդ այնպիսի աններելի կարծիքներ պէտք է չյայտնել, ինչպէս օր. «Ճրէից աղջի իրօնը մինչեւ այժմ յիշած կրօններից այնքան էլ բարձր չէ» (Եր. 19): Ուրեմն չին Կտակարանի Յայտնութեան կրօնը աստիճանական տարրերութիւնը մի՞ց ունի հեթանոսական կրօնից, և այնուամենայնիւ նա մե՞ր կրօնն է, նորա ս. զիրքը մե՞ր ս. զիրքը՝ վկայութիւններ բերելիս Նոր Կտակարանի հաւասարագործ այդ ի՞նչ հակառութիւնն է: Միթէ մեր Թրկից Արրահամի Խառհակի, Յակորի Աստրծոն իւր Հայր անուանելիս, կարող էր մօտաւորապէս Յունաց և Հռոմայցոց Աստրծոն ևս Հայր անուանել: Սինա լերան վերայ յայտնուողն ու տառնարաննեայ պատուերներ տուողը նոյն այդ վիխան և սպառնալից Եհավան չէ, որի «Ես եմ Տէր Աստուած քո» խօսքերն այդպէս քանդը և անուշ են հնչում: Համ. Եր. 135) Իրօք այդ խօսքերն ամենենին քաղցր և անուշ չեն հնչում, կամ հնչում են բառ այնմ թէ, որպիսի Աստուած ենք պատկերացնում նոցա ներքոյ՝ Քրիստոսի Հայր սիրող Աստրծոն, թէ մարդարէների արդար և իւր սրբութեան նախանձամնպիր Տիրոջ: Նոյն Աստուածն է, Դաւ, Որի գաղափարը չին Կտակարանում յայտնուել է յիրաւի ինչպէս առաւոտեան արշալոյս՝ շամանդաղի մէջ, և Նոր Կտակարանում՝ արեգակնային պայծառ լուսով, բայց հեթանոսութիւնը նորա համար քրիստոնեական տեսակետից ոչ թէ, այդ է եղել, այլ բացարձակ խաւար: — Սակայն խնդրից չեղուելու համար, աւելի լաւ է հետեւնք այն կարգաւորութեան որի համաձայն Հայր Սահմակ մասերի է բաժանել իւր ուսուցման նիւթը, և մի քանի օրինակներով բացարձինք մեր միտքը:

Թէ որչափ անյաջող և անփոյթ կերպով է կազմուած ՅՅառաջարանութիւնը, բաւական է միայն յիշել, որ Արքի մասին է առուած: Թողնենք այն, որ Հարկ չկայ քրիստոնեական կրօնի գասազբքի մէջ հաշուել թէ որշափ արդիւնք է ունեցել քրիստուածացնչական ընկերութիւնը, թողնենք ուրիշ սիսալ կամ անհիմ աւանդութիւններից քաղցուած տեղեկութիւններ՝ զանցառնենք նաև որ եօթանանից թարգմանութիւնից անմիջապէս վլուզատային անցնելը և զուա հիտ կապ ունեցող պարագաներ յիշելն արև մտեան քրիստոնեաների մանկանց համար է, մինչ Հայ մանուկներին ուրիշ աւելի հետաքրքիր տեղեկութիւններ կարելի եր տալ (օր. պէտիթայի մասին են), մենք չենք հասկա-

Փետիշ է անուանում այն կոսալաշտներին, որոնք այդպէս կոչուող առարկաներ կամ կուռքեր են պաշտում: Այնուհետեւ կենդանիներին պաշտելու սօվորութիւնը յառաջ եկած է, համարում նա աստղաբաշխութիւնից: Իրեկ թէ, մարդիկ առաջ երկնքի լուսաւորներին են պաշտել ապա աստղաբաշխական հետագառութիւններով կենդանակերպ են նկատել նոցա մէջ և սկսել են լուսաւորների տեղ երկրիս վերայ նոցա փոխանորդներին պաշտել՝ ձաւկ կշուռ ցուը կարիճ.... Կրօնների այն բաժանումն առհասարակ որ Հ. Սահակ է ընծայում ոչ մի զիտնական հիմունք չունի. եթէ զիտութեանը հարցնենք, այն ժամանակ կայ ֆետիշիզմ: անխմիզն բնապաշտութիւն և ինեթէ արդի աշխարհագրութեան՝ քրիստոնեաթիւնը, մահմեղականութիւնը բուդդայականութիւնը, բրահմանյականութիւնը և այլն: — Այսպէս և շփոթ է Յայտնութեան մասին տուած գաղափարը. ընդհանուր և մասնաւոր յայտնութիւնն այն ձեռով են յիշաւում: որ կարծես դոքա իրար նման բաներ լինին, որ առանց մէկի միւսով ևս կառավարուել կարելի էր, և կրկին՝ մասնաւոր յայտնութիւն ընդունալիների շարքում են Սոլոն, Սոկրատես, Պլատոն .. Արդիօք գոցան ևս Աստուած յայտնուել է. Եւ արտաքին կերպարանքով և ներքին կերպով: Ինչպէս կարելի է այսօրինակ գայթմակղեցուցիչ գարձուածներով և մաւթ համեմատութիւններով պղարքել ծշմարիտ յայտնութեան գաղափարը:

Շատ աւելի յարմարաւոր և աւելորդաբանութիւններից զերծ չէ նաև այն ամենը, ինչ որ ս. Դրքի մասին է առուած: Թողնենք այն, որ Հարկ չկայ քրիստոնեական կրօնի գասազբքի մէջ հաշուել թէ որշափ արդիւնք է ունեցել քրիստուածացնչական ընկերութիւնը, թողնենք ուրիշ սիսալ կամ անհիմ աւանդութիւններից քաղցուած տեղեկութիւններ՝ զանցառնենք նաև որ եօթանանից թարգմանութիւնից անմիջապէս վլուզատային անցնելը և զուա հիտ կապ ունեցող պարագաներ յիշելն արև մտեան քրիստոնեաների մանկանց համար է, մինչ Հայ մանուկներին ուրիշ աւելի հետաքրքիր տեղեկութիւններ կարելի եր տալ (օր. պէտիթայի մասին են), մենք չենք հասկա-

նում ինչպես կարելի է տառը, թէ և Դիրքը «տալիս է մարդուն լուսաւորութիւն» զաստիարակութիւն, սրբութիւն (առող անել), միսիթարութիւն՝ իսկ այս լիշած կետերը շնորհում են մարդուն երանութիւն, երջանկութիւն, գիրքը—միթէ, գիրքն է տաղիս երանութիւն, գիրքը «մարդուն զոհ բերելը ոչնչացրաւ» ստրիութիւնը վերացրաւ»—այդ ի՞նչ տարօրինակ մարդեր են, տառապաշտ բողոքականութեան թելազրած։ Ս. Գիրքը մեծ բան է, անդնահատելի գանձ քրիստոնէութեան համար, բարեպաշտ, հաւատացող քրիստոնեան ամեն ինչ կարող է նորա մէջ գտնել՝ և՝ միսիթարութիւն, և՝ զաստիարակութիւն — բայց միթէ ինքը գիրքն է տալիս այդ՝ տաղիս ամեն կարգացողի, և՝ անհաւատին, և՝ մահմեցականին, և՝ հեթանոսին — երբէք այն աւետարանը, որ զօրութիւն Աստուծոյ է ի փրկութիւն ամենայն հաւատացելոցց գուռած աւետարանը չէ։ «Զի զիրն սպանանէ, այլ հօգին կեցուցանէ», ասում է նոյն Պօղոս առաքեալը, իւր ժամանակ գտնուած Ս. Գրքի և նաև մեզ համար նույրական գարձած Հին կտակարանի համար։ Թէ, այս և թէ զրքի միւս բոլոր հատուածներում Արժ. Հեղինակը հարկաւ շատ գեղեցիկ խորհրդածութիւններ ևս անում է և շահեկան ծանօթութիւններ տալիս՝ մեր միարը չէ նացա արժէքը նսեմացնել, խօսքը ընդհանուր հայեցակեալ ափ մասին է՝ այն մասին, թէ ի՞նչ բան ինչպէս է ասուած և ի՞նչ տեղ է բանում ընդհանուրի կազմութեան մէջ, իսկ Ս. Գիրքը ներկայացնել այդ կերպ իրրե մի կենդանի ամենակարող զօրութիւն՝ անտեղութիւն է։ կենդանին Ս. Եկեղեցւոյ մէջ իշխող հօգին է, որի ազգեցութեամբ միայն Ս. Գրքի մէջ զրի առնուած Աստուծոյ խօսքը վերակենդանանում և փրկարոր զօրութիւն է զանուամ։ այդ հոգովով առաջնորդուած ենք և զանուամ Ս. Գրքի, իրրե Յայտնութեան վասերական լիշառակարանի մէջ հիմնական գաղափարներ, որոնք պետք չէ նոյն իսկ Ս. Գրքի գաղափարներ կոչուին, այլ Յայտնութեան ճշմարիտ կրօնի գաղափարներ։

Ընդունելով հանդերձ Աստուծոյ արքայութեան գաղափարը իրրե մեր կրօնի զիսա-

որ գաղափար (թէ և Հին ուխտի նկատմամբ առարկութիւններ կարելի եր անել), մենք չենք հասկանում նիւթի այն բաժանումն, որ Հ. Սահակ է տալիս, Ա) արքայութեան տէրը, Բ) քաղաքացին, Գ) հիմնադիրը, Դ) ժամանակաւոր իրականացումն եւ լրում։ Որովհետեւ ոչ մի որոշ տեսակի ներքոյ չի եղած այդ բաժանումը, ուստի մի մասն անցնելիս անկարելի է միւսների նիւթը չշօշափել և այդպէս կրկնութիւնների և շփոթութիւնների մէջ ըլնկնել, միթէ աէլը ու հիմնադիրը այդշափ հետու և անջատ են միմանցից, և ովէ մի հաստատութիւն, նկարագրելիս հիմնագրի մասին ամէնից վերջը խօսում։ տէլը ու քաղաքացին ժամանակաւոր իրականացման կամ լրման մէջ միթէ չեն մտնում։ ինչպէս կարելի է նիւթի մի մասը ըստ անձերի բաժանել միւսն ըստ ժամանակի կամ կազմութեան։ Իրօք այդ մասերը մի որոշ ներքին կապով միացած չեն ներկայ զրքի մէջ, Արժ. Հեղինակը սկսելով Ա. հատուածից Աստուծոյ իրրե արքայութեան տիրոջ մտսին խօսել՝ յատաջ է բերում այն ամէն ծանօթութիւնները, որ Աստուծոյ զոյութեան, էութեան, յատկութիւնների, ներզործութիւնների նկատմամբ ստանալ կարող ենք այլ և այլ աղբիւններից։ բայց թէ արքայութեան զաղափարը ի՞նչ գեր է, կատարում այդ բոլորի մէջ՝ չի պարզուում։ գոնէ ոչ այն չափով, որ նիւթի կանոնաւոր զասաւորութիւնը կպահանջէր։ Այդպէս են նաև միւս հատուածները՝ վերնազրի մի քանի տողով միայն կապուած ընդհանուր զաղափարի հետ։

Աստուծոյ զոյութեան և էութեան վերաբերեալ զլուխները մեծ մասամբ յաջող հն՝ պարունակում են գեղեցիկ օրինակներ և նրամանութիւններ, որոնք երեկ հաճութեամբ կը կարգացուին և շատ լաւ տպաւորութիւն կը թողնեն, թէպէտ ոձի կամայ և ակամայ սխալներ տեղ տեղ խանդարում են ընթերցանութիւնը։ օր, «Աշխարհիս մէջ գտնուող կարգ ու կանոնները ակամայ լիշեցնում են մեզ նրա (աշխարհի) գոյութիւնը» (երեկ՝ Աստուծոյ)։ «Որոշ օրէնքի են ենթակայ կեանքն ու մաշը, այլ և մարդիկ» (ուրիմ կեանքն ու մաշը առանձին, մարդի առանձին)։ «Այս

օրէնքը ոչ թէ քո փերեռ մն է, ոչ թէ քեզ-նից դուրս ընտթեան մէջ, այլ և քո մէջ, քո հոգու մէջ ...» (ուրեմն ընտթեան օրէնք և բարոյական կամ խղձի օրէնք նոյն են). Մարդու երկու մասից է բաղկացած՝ մարմից և հոգուց» (մասից) եղն։ Սակայն առելի կարևոր թերութիւնն այն է, ինչպէս ընդհանուրի համար ասացինք, որ զուտ աւետարանական գաղափարներ բացարուում են այստեղ գեղարուեստական օրինակներով և բնագանցական տեսութիւններով, և եթէ աւետարանի սկզբունքներ ևս յիշուում են՝ այնչափ կողմնակի կերպով, որ գրեթէ աննկատելի են մնում. այդպէս են օր. «Աստուած սէր է» գաղափարի համար ասածները, որ եթէ առանց Քրիստոսի յայտնութեան ըմբռնելի չէր մեզ, կը նշանակի Քրիստոսով պէտք է բացարուի, և ոչ թէ, քիութեան վկայութիւններով. մինչ ծաղիկների նկարագրութեամբ և չին Կտակարանի խօսքերով (որոնք ոչինչ անմիջական առընչութիւնն չունին աւետարանական սիրոյ գաղափարի հետ) համեմած մի շարք խորհրդածութիւններից յետոյ բացականչել. «Եկէք ուրեմն, տղայք, սիրենք Աստուածուն», կը նշանակի խաղալիք գարձել ահաւոր խորհրդաները՝ թոյլ տալ որ թութակի պէս գուցէ, և մի տեսակ բարեպաշտական զգացմամբ, կրկնեն չհասկացած խօսքեր, ու երեակային թէ, հասկանում են։ Այս րոլոր թերութիւնները յառաջ են գալիս նորանից, որ քրիստոնէից Աստուածը առանց Քրիստոսի և ներկայանում մեր առաջ. մենք ամէն ինչ լսում ենք նորա մասին, բայց որ Նա Քրիստոսի Հայրն է, և Քրիստոսի միջոցով մեր Հայրը՝ այդ չենք լսում. իսկ մեզ համար կարեորը, և մի ակ կարեորը, չենց այդ է։

Այսպէս կարելի եր շարունակել ամրող պրեի քննադատութիւնը. բայց արգէն մեր ասածները չափից աւելի ընդարձակ եղան. ուստի մնացածի համար կրաւականնք մի քանի հարեանցի ակնարկներով.—Արժ. չեղինակը ընդունելով, որ տասն պատուիրանները պարունակում են իրանց մէջ այն ամէնը, ինչ պարտաւորութիւն որ մարդու ունի դէպի Աստուած, դէպի ընկերը և դէպի իւր անձը»; իւր գրքի մօա 100 երեսը նուիրել է նոցա-

պարզաբանութեան—զուր աշխատանք։ Նախ Աստուածոյ ներգործութիւնները ըրսոի բաժանելի չորսից մէկը համարել Աստուածոյ օրէնստուութիւնը և ամբողջ պրեի պրեթէ երրորդ մասը կախել այդ բաժնից՝ աշքի զարնող անկանոնութիւնն է, կարգաբանութեան (սիստեմի) տեսակեալից։ Երրորդ՝ կրօնի մէջ կան զուտ կրօնական-գաւանական ծշմարտութիւններ։ և կան բարոյական գաղափարներ, որոնք միմեանց հետ սերտ կապ ունին՝ միմեանցից են բղխում։ բայց չպէտք է շփոթուին և իրար խառնուին, ինչպէս այստեղ, մասամբ նաև գրքի միւս մասերում արտօն է, այլ պէտք է կրօնի գասագրքի երկու զլխաւոր. մասերը կազմեն։ Երրորդ՝ պէտք էր շմառանուլ վերե ասածը, թէ «Հրենից ազգի կրօնը նեթանուական կրօններից այնքան բարձր չէ, չէ՞ որ տասն պատուիրանները հրէից կրօնի սրբազն զրքի մէջ են գտնուում։ Մենք յիշեցինք, որ այդ կրօնն իրօք անսահման կերպով բարձր է միւս կրօններից՝ ծշմարիտ յայտնութեան կրօն։ և որոշ տեսակետով նոյն ինչ որ մեր քրիստոնէական կան կրօնը՝ նախապարաւատական շնչան նորու համար. բայց երբէք կարելի չէ ասել թէ այդ կրօնի մի քանի պատուիրանների մէջ ամփոփուած են Քրիստոսի աւետարանի բոլոր բար, պահանջները։ Յիրաւի այդպէս ընդունուի են շատ շատերը. այդպէս ընդունել է կուտեր իւր փոքր կատելիզմի մի հիմնական մաս գարձնելով տասն պատուիրանների, ուսումը, և նորան հետեւ են բոլոր բողոքական եկեղեցները, օրինակ առել նաև ուրիշ եկեղեցներ. այնուամենայնիւ ակնյայնի սխալ է, այդ: Եթէ Քրիստոս իւր քարոզած բարոյականութիւնը ըստ ամենայնի նոյն համարեր տասն պատուիրանների հետ, իւրաքանչիւրի հանգել մի իշխանական «այլ ևս ասեմ ձեզ» չէր դնի։ Արգէսպի կարելի լինի աւետարանի բար. սկզբունքները նոցա յարմարեցներ՝ հարկաւոր է չափազանց մեծ բռնութիւն գործ դնել նոցա բառական իմաստի վերայ, ինչպէս և արել է Հայր Սահակ, երբ առաջին երկու պատուիրանների մէջ արտայալաւած է գտնում արգէն՝ «Աստուած սէր է», «Հոգի է Աստուած և երկրպագուացն նորա հոգւով և ծշմարտութեամբ պարտ է երկիր-

պատանել»: — Դա պատուիրանի մէջ Քրիստոսի բոլոր ասածները երգման և ճշմարտախօսութեան մասին այլ և միսիթարութեան, աղօթքի, դոչութեան գաղափարներ, և այն:

Մանրամասնութեանց մէջ մանել այլ և չենք կարող բաւական է յիշենք: Որ Ա. Հասուածի համար նկատած թերութիւնները աչքի են ընկնում նաև թ. և Դա հասուածներում՝ կարգաբանութեան որոշ սկզբունքների բացակայութիւն, գաղափարների մէջ անձրշգութիւն, լեզուի խորթութիւններ, այսպէս որ մեղքի զանազան տեսակները բաժանած են, «Ա. մեղանչելանձի գէմ թ. օրէնքի գէմ թ. մարմոյ գործարանների գէմ»: Դ. յանցանքների ծագումն, Ե. յանցանքի նպատակը: Զ. յանցանքների մեծութիւնը: Իրրե թէ յանցանքների ծագումն, նպատակը, մեծութիւնը նոյնպէս մեղքի տեսակներ են: Աւելի զարմանալին այն է, որ Հայոր Սահակ մարմնոյ գործարանների գէմ եղած յանցանքը երկուսի բաժանելով՝ առտաքին և ներքին», չար մուածողութիւնները, անազնի զացումները եւ այն յառաջ է բերում իրրե մարմնոյ գործարանների գէմ եղած յանցանքներ: Իսկ ձեռներն ընդունում է իրրե խաքեզայութեան գործարան: Այսպէս և, երբ հասնում ենք Դ. հասուածին, որի վերնագիրն է՝ Թագաւորութեան հիմսալիքը (Յիսուս Քրիստոս), և յոյս ունինք, որ վերջապէս մեր Փրկչի մասին պէտք է խօսք լինի՝ յառաջ են գալիս «Սահապետներ», Մովսէս և օրէնք, թագաւորութեան գարեշըն: Ա այն, և միայն վերջին զլուխն է՝ նկարագրում Յիսուսի կեանքը: այն ևս շատ անգամ սիսալ կամ աւելորդ տեղեկութիւններ են հաղորդած: ինչպէս որ, Սակոկ քահանայի ժառանգ, Քրիստոսի ժամանակ հրէից քահանայական գասը կազմող, սաղուկեցները համարուում են ասնհաւատ աղատամիտների կուսակցութիւն, իրենց անունն ստացած ուարբի Սագոկից: մէջ են բերուում Եսսենացիք, որոնք ոչինչ գեր չունին աւետարանի պատմութեան մէջ և որոնց միայն մի քանի պատմագէտների երեակայութիւնը կապել է Քրիստոսի անուան հետ:

Վերջացնելով մեր խօսքը՝ պարոք ենք համարում կրկին յիշել, որ Հայոր Սահակի այս նոր երկասիրութիւնը շատ արժանաւոր կողմեր ևս ունի. կրօնական ջերմ զգացումն բացարութիւնների պարզութիւններ և գրքից, գեղեցիկ օրինակներ բնութիւնից և մարդոց կեանքից գարձնում են այն մի օգտակար և կրթիչ ընթերցանութեան զիրք, և եթէ մենք համեմատաբար մանրամասն և խիստ քննագատութեան ենթարկեցնք այն՝ պատճառը զիսաւ որապէս նորա տաւելութիւններն են իւր նմանների նկատմամբ, վերջին ժամանակ մեծ քանակութեամբ լոյս տեսնող կրօնի գասագրերի մէջ շատ քչերը կան, որ քննագատել արժե, և այդ քչերից մէկն է ներկայ աշխատութիւնը: Սակայն կրօնի դասազիրք կազմելու համար բաւական չէ կրօնի վերաբերեալ զանազան տեսակ զիտելիքներից մի ժողովածու կազմել, այլ հարկաւոր է՝ որոշ հասակ մի որոշ դասարան աչքի առաջ ունենալով, ըստ այնմ կէտ առ կէտ յառաջ բերել և բացատրել յայտնի եկեղեցւոյ զաւանութիւնն ու աւետարանից տաւած սկզբանները. և ամեն գէպքում պարզ պէտք է լինի՝ ինչ զիտելիքներ ընդհանուր են չին և նոր կատարանների համար, ինչը բոլոր քրիստոնեանների համար, և ինչն առանձին հայեցողութիւն է Հայոց եկեղեցւոյ: Առ հասարակ կրօնի դասազրքի մէջ իւրաքանչիւր խօսք չափած և կշառած պէտք է լինի, մինչ ծանծաղ բացատրութիւններով ու կրօնի հետ անմիջական կապ չունեցող խնդիրներով ծանրացնել գործը և ուշադրութիւն ցրուել՝ անտեղութիւն է:

Կ. Վ.

